Արձանագրություն N 4
ՀԱՊՀ-ԳՀԾՁԲ-26/3 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
«Աուդիտորական ծառայություններ»

ք. Երևան

06 մայիս 2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
նախագահ՝ Գևորգ Հարությունյան
անդամներ՝ Կարինե Խաչատրյան
Աննա Սարգսյան
Ալվարդ Վարդանյան
Անահիտ Կարապետյան
Զարինե Հայրապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

1.Ընթացակարգի հայտի գնահատման և ամփոփման մասին

(Գ. Հարությունյան)

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց.

1.1. Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պայմաններին, բացառությամբ «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն»-ը հավաստող փաստաթղթերի:

Մասնավորապես՝

Հրավերի 2.4.1 կետի համաձայն՝ աուդիտ իրականացնող ընկերության պատասխանատու աուդիտորը, հանդիսանալով մասնագիտացված կառույցի անդամ, պետք է ունենա ԲՈՒՀ-ական ոլորտում աուդիտորի առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ԲՈՒՀ կարող է հանդիսանալ բացառապես լիցենզավորված այն հաստատությունը, որի հիմնական նպատակը բարձրագույն կրթական ծրագրերի կազմակերպումն ու իրականացումն է, որի արդյունքում շնորհվում է համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի կամ դոկտորի աստիճան):

Ուսումնասիրելով «Պոլիտեխնիկ» գիտակրթական բարեգործական հիմնադրամի կանոնադրությունը՝ հանձնաժողովը պարզեց, որ այն չի հանդիսանում բարձրագույն ուսումնական հաստատություն, քանի որ չի իրականացնում բուն բարձրագույն կրթական ծրագրեր և չի շնորհում համապատասխան կրթական աստիճաններ: Հիմնադրամի գործունեությունն ունի աջակցող և տեխնիկական բնույթ և ուղղված է համալսարանի կրթական և գիտական գործընթացների օժանդակմանը:

Բացի այդ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հրապարակված ՀՀ-ում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկում նշված հիմնադրամը ներառված չէ (https://escs.am/am/news/27584):

1.2 Վերոգրյալի հիման վրա հանձնաժողովը արձանագրում է, որ՝

- պատասխանատու աուդիտոր Արամ Հովհաննիսյանի դեպքում հիմնավորվում է ԲՈՒՀ-ական ոլորտում ընդամենը 3 տարվա աշխատանքային փորձ (Երևանի պետական համալսարան, Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի APPEAR ծրագիր),
- աուդիտոր Լիլիթ Հովհաննիսյանի դեպքում հիմնավորվում է ԲՈՒՀ-ական ոլորտում 2 տարվա աշխատանքային փորձ (Հայաստանի պետական մանկավարժական համալսարան):

Այսպիսով, նշված անձինք չեն բավարարում հրավերի 2.4.1 կետով սահմանված՝ ԲՈՒՀ-ական ոլորտում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձի պահանջը:

1.3 Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց (գնահատման թերթիկները կցվում են).

1.3.1. «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի որակավորումը տվյալ չափանիշով գնահատել անբավարար, հայտը՝ մերժել, հիմք ընդունելով հրավերի 8.10 կետը:

1.3.2. «ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից:

1.3.3. Ընտրված մասնակցին՝ «ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ին, առաջարկ ներկայացնել պայմանագիր կնքելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ — Գևորգ Հարությունյան

Անդամներ — Կարինե Խաչատրյան

Աննա Սարգսյան

Ալվարդ Վարդանյան

Անահիտ Կարապետյան

Զարինե Հայրապետյան

Քարտուղար — Լուսինե Ավետիսյան